Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական

միջազգային կենտրոնի տնօրեն

_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետվություն

2016թ. Արտաքին կապերի բաժնի

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը միջազգային համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր ունի մի շարք միջազգային հաստատությունների և կառույցների հետ՝ Պարմայի համալսարան (Իտալիա), Թուլուզի համալսարան (Ֆրանսիա), Տուշայի համալսարան (Իտալիա), Տուրիզմի և սերվիսի պետական համալսարան (ՌԴ) և այլն:

Տվյալ պահին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժինը համակարգում է հետևյալ ծրագրերը՝

- «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ», որի հիմնական նպատակն է «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպումը հեռավար ձևաչափով՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի համատեղ դիպլոմների շնորհմամբ: Միջազգային գործընկերն է Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանը: *Հաշվետու տարում ավարտվել է բուհի տեխնիկական վերազինումը, հեռավար ուսուցմանը համահունչ և հեռավար կրթության իրականացումը կարգավորող կարգերի մշակումը և Գործարար վարչարարություն մասնագիտությամբ մագիստրոսական ծրագրի հեռավար ուսուցման ուսումնական պլանի կազմումը:*
- «Վերիտաս՝ Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագիր, որի նպատակն է բարելավել Հայաստանի հետբուհական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին: Ծրագրում ներգրավված են շուրջ 20 հայկական և եվրոպական առաջատար բուհեր և կրթական կազմակերպություններ: *Հաշվետու տարում ստացվել է ծրագրով նախատեսված համակարգչային սարքավորումները, իրականացվել է Մոլեկուլային և բջջային կենսաբանություն մասնագիտությամբ*

ասպիրանտական ծրագրի SWOT վերլուծությունը, ընթացքի մեջ է ծրագրի ինքնավերլուծության կազմման աշխատանքները:

- Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտության առաջին և երկրորդ կուրսի 8 ուսանող մեկ կիսամյակ մեկնելու են սովորելու Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանում, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի 4 ասպիրանտ մինչև չորս ամիս տևողությամբ ուսումնառությունն անցկացնելու են այնտեղ: Ծրագրով նաև ութ դասախոս երկշաբաթյա վերապատրաստում են անցնելու Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանում: Հինգ դասախոս Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանից վերապատրաստում են անցկացնելու Հայաստանում: *Հաշվետու տարում առաջին և երկրորդ կուրսի 8 ուսանող մեկնել են սովորելու մեկ կիսամյակ Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանում, ս.թ. դեկտեմբերի 5-7-ը Տուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի (IRIT -Institut de Recherche en Informatique de Toulouse – Toulouse Institute of Computer Science Research) պրոֆեսոր Ֆիլիպ Ջոլին սեմինար անցկացրեց ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում՝ նվիրված պատկերներում անձի ճանաչման և նույնականացման խնդիրներին:*
- Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 3 վարչական անձնակազմ մեկնելու են երկշաբաթյա վերապատրաստման և գործնական կապերի հաստատման Տուշայի համալսարան (Իտալիա), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի 5 դասախոս և Էկոկենտրոնի երկու ասպիրանտ մեկնելու են երկշաբաթյա վերապատրաստումների: Հինգ դասախոս Տուշայի համալսարանից անցկացնելու են երկշաբաթյա վերապատրաստումներ: *Հաշվետու տարում հոկտեմբերի 1-5-ը Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում Տուշայի համալսարանի ներկայացուցիչներ Ծրագրի համակարգող Նիկոլո Մերենդինոն, Կենսաբանական, ագրոպարենային և անտառային համակարգերի նորարարության ֆակուլտետի պրոֆեսոր և Ծրագրի պատասխանատու Անջելա Ֆաթորեթթին այցելեցին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ՝ տալով ծրագրի մեկնարկը:*

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի Արտաքին կապերի բաժինն անցկացրել և/կամ մասնակցել է հետևյալ միջոցառումներին՝

- Ս.թ. փետրվարի 2-3-ին տեղի ունեցավ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում դրամաշնորհառու բուհերի ներկայացուցիչների մասնակցությամբ դրամաշնորհային ծրագրերի ղեկավարման, մշտադիտարկման, գնումների և ֆինանսական ընթացակարգերին նվիրված աշխատաժողով Ծաղկաձորում: Աշխատաժողովի շրջանակներում արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը ներկայացրեց «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագիրը:
- Ս.թ. մարտի 18-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի գլխավորությամբ ընդունեց Իրանի Իսլամական

Հանրապետության գիտության և բարձրագույն կրթության նախարարության պատվիրակությանը՝ քննարկելու կրթության ոլորտում հետագա համագործակցությանն առնչվող հարցեր:

- Կենտրոնի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի մեկնարկի հետ կապված ս.թ. ապրիլի 6-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում տեղի ունեցավ խորհրդակցություն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մասնագիտական ամբիոնների վարիչների, համակարգողների և վարչական անձնակազմի մասնակցությամբ:
- Ս.թ. հունիսի 24-ին տեղի ունեցավ տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նիստը վարչական անձնակազմի և ամբիոնի դասախոսական կազմի մասնակցությամբ: Օրակարգում ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ «Գործարար վարչարարություն» մասնագիտացմամբ հեռավար մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի քննարկումն էր:
- Ս.թ. հուլիսի 27-ին տեղի ունեցավ «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի շրջանակներում ընտրված անհատ խորհրդատուների հանդիպումը՝ ծրագրի ընթացքը և խորհրդատվական աշխատանքների մեկնարկը քննարկելու նպատակով:
- Ս.թ. օգոստոսի 25-26-ին ՀՀ սփյուռքի նախարարության և Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հայկական աշխարհը համացանցում» գիտաժողովը, որտեղ «Հայալեզու հեռավար կրթությունը՝ կրթության մատչելիության բարձրացման մոդել» թեմայով հանդես եկավ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը:
- Ս.թ. սեպտեմբերի 17-18-ին տեղի ունեցավ երկօրյա աշխատաժողովի, որի ընթացքում ներկայացվեցին արտերկրում ուսանելու առումով ԱՄՆ-ում տիրող միտումները, քննարկվեցին կրթական փոխանակումների միջոցով ձևավորվող հավելյալ արժեքները, նախկին ծրագրերից քաղած դասերը և հնչեցին որոշ խորհուրդներ այն մասին, թե ինչպես կարելի է հետաքրքրել ամերիկյան լսարանը: Աշխատաժողովին մասնակցում էին Հայաստանի պետական ու մասնավոր բուհերի, Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ներկայացնում էր արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը:
- Ս.թ. հոկտեմբերի 1-5-ը Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում Տուշայի համալսարանի ներկայացուցիչներ Ծրագրի համակարգող Նիկոլո Մերենդինոն, Կենսաբանական, ագրոպարենային և անտառային համակարգերի նորարարության ֆակուլտետի պրոֆեսոր և Ծրագրի պատասխանատու Անջելա Ֆաթորեթթին այցելեցին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ՝ տալով ծրագրի մեկնարկը, որի շրջանակներում կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ:
- Ս.թ. հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի շրջանակներում ընտրված անհատ խորհրդատուների երկրորդ հանդիպումը՝ խորհրդատվական աշխատանքների ընթացքը, ձեռք բերված արդյունքներն և առկա խնդիրները քննարկելու նպատակով:
- Ս.թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի աշխատակազմը, ՀՀ ՊԿԱ պրոռեկտոր, ծրագրի ղեկավար Թերեզա Խեչոյանը, ծրագրի համակարգող, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը, տեխնիկական խորհրդատուներ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ SS բաժնի պետ Արմեն Սարգսյանը և ՀՀ ՊԿԱ SS բաժնի պետ Ալեքսան Դավթյանը այցելեցին Դրեզդենի տեխնոլոգիական համալսարան (Գերմանիա) ուսումնասիրելու հեռավար կրթության իրականացման միջազգային

փորձը, ինչպես նաև «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագրի բովանդակային առանձնահատկությունները:

- Ս.թ. նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նիստը վարչական անձնակազմի և ամբիոնի դասախոսական կազմի մասնակցությամբ: Օրակարգում ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ «Գործարար վարչարարություն» մասնագիտացմամբ հեռավար մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի հերթական քննարկումն էր:
- Ս.թ. նոյեմբերի 28-29-ը Կիևում (Ուկրաինա) տեղի ունենացավ Էրազմուս+ կոնտակտային սեմինար Արևելյան գործընկերության երկրների համար՝ Էրազմուս+ ծրագրի եվրոպական երկրների բուհերի հետ համագործակցությունը խորացնելու նպատակով: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ներկայացնում էր արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը, որ երկօրյա կոնտակտային սեմինարի ընթացքում համագործակցության պայմանավորվածություններ ձեռք բերեց մի շարք եվրոպական համալսարանների հետ:
- Ս.թ. դեկտեմբերի 9-ին արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը վերապատրաստում անցկացրեց ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների վարիչների և միջազգայնացման պատասխանատուների հետ: Վերապատրաստման թեման էր Էրազմուս+ K1 գործողություն միջազգային կրեդիտային շարժունության ծրագիրը և այդ ծրագրին դիմելու ձևերը:

Կնքված նոր հուշագրեր և համաձայնագրեր

- Տուշայի համալսարանի (Իտալիա) հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր՝ երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում կրթական և գիտական համագործակցություն նախաձեռնելու նպատակով, մասնավորապես ուսանողների և դասախոսների փոխանակում, համատեղ կրթական և գիտական դրամաշնորհային ծրագրերի ներկայացում:
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հետ կնքվել է փոխըմբռնման հուշագիր հեռավար կրթության զարգացման նպատակով:
- Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հոգեբանության ինստիտուտի հետ կնքվել է համագործակցության պայմանագիր:

Մշակված փաստաթղթեր

- Օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգ

Հաշվետու տարում բաժնի կողմից՝

- ✓ պատրաստվել, թարգմանվել և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վեբկայքում է տեղադրվել 25 նորություն և 22 հայտարարություն:
- ✓ կազմակերպել է երկու օտարերկրյա դիմորդի անձնական գործի ձևակերպում:
- ✓ տրվել է 83 երկլեզվանի տեղեկանք վճարովի հիմունքներով:
- ✓ օժանդակել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ հանդիսացող ԳԱԱ 12 ասպիրանտների և ուսանողների 4 ընտանիքի անդամների համար ՀՀ-ում բնակվելու մեկ տարվա ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու հետ կապված հարցերում: